

ԿԱՐԾԻՔ

Նարե Արթուրի Ղազարյանի «Ավագ դպրոցում գեղագիտական արժեքների ձևավորումը որպես մաթեմատիկայի ուսուցման հիմնախնդիր» խորագրով ԺԳ.00.02 «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (մաթեմատիկա) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցմանը ներկայացվող ստենախոսության վերաբերյալ

Թեև գեղագիտական դաստիարակության հիմնախնդիրը սովորաբար իրականացվում է հանրակրթության հումանիտար ոլորտում, սակայն քիչ չեն նաև մաթեմատիկայի ուսուցման շրջանակներում խնդրի լուծմանն ուղղված աշխատանքները: Մաթեմատիկայի հոսքային ուսուցման պայմաններում խնդիրն ունի մի շարք առանձնահատկություններ, սակայն այս ուղղությամբ չկան ամբողջական հետազոտություններ: Դրանով իսկ պայմանավորված է ստենախոսության թեմայի արդիականությունը:

Ստենախոսության առաջին՝ «Մաթեմատիկայի ուսուցման գործընթացի գեղագիտական ներուժի բացահայտման տեսական հիմունքները» գլխում ներկայացվում է մաթեմատիկական գեղեցիկի մասին պատկերացումների զարգացման պատմական հարուստ փորձը՝ սկսած անտիկ շրջանից մինչև մեր օրերը: Դիտարկվում է մաթեմատիկայի ուսուցման գործընթացի գեղագիտական ներուժի բացահայտման հիմնախնդիրը: Այն ուսումնասիրվել է բազմաթիվ գիտնականների կողմից:

Որպես հիմնախնդրի լուծում ներկայացվում են գեղեցիկի օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշները, ինչպես նաև մաթեմատիկական հասկացությունների արտաքին և ներքին գեղագիտությունը: Ներկայացվում են նաև տարբեր գիտնականների առաջարկած լուծումները:

Այս գլխի վերջում դիտարկվում են մաթեմատիկայի հոսքային ուսուցման գործընթացում գեղագիտական արժեքների ձևավորման հոգեբանամանկավարժական առանձնահատկությունները: Դիտարկվում են նաև հումանիտար և բնագիտամաթեմատիկական հոսքերում հուզականության դրսևորումները և դրանց հաղթահարմանն ուղղված մոտեցումները: Առաջարկվում են մաթեմատիկական

գեղեցիկի տարբեր հատկանիշների դրսևորումները որպես դրական հույզերի առաջացման և բացասական հույզերի կանխման միջոցներ:

Ատենախոսության երկրորդ՝ «Ավագ դպրոցում գեղագիտական արժեքների ձևավորման խնդիրը մաթեմատիկական կրթության զարգացման արդի միտումների համատեքստում» գլխում ատենախոսը ներկայացնում է գիտական գեղեցիկի ձևավորման խնդիրը մաթեմատիկական կրթության հումանացման, տեղեկատվայնացման և ինտեգրման համատեքստերում:

Կատարված է տարբեր հոսքերի դասագրքերի վերլուծություն, իրականացվել են հարցումներ ուսուցիչների շրջանում, ներկայացված են հարցումների արդյունքների վիճակագրական վերլուծությունները: Առաջարկվում է այլընտրանքնային ծրագիր: Ծավալուն հետազոտություն է կատարված նաև գեղեցիկի ձևավորման խնդրի շուրջ մաթեմատիկական կրթության ինֆորմատիզացիայի, ինտեգրված ուսուցման, ինչպես նաև ֆինանսական կրթության պայմաններում:

Ատենախոսության երրորդ՝ «Ավագ դպրոցում գեղագիտական արժեքների ձևավորման ուղիները մաթեմատիկայի ուսուցման գործընթացում» գլխում նախ դիտարկվում է մաթեմատիկայի գեղագիտական գրավչության բացահայտման հարցը մաթեմատիկական խնդիրների ուսուցման գործընթացում: Այստեղ արժեքավոր է ատենախոսի կողմից կազմված խնդիրների համալիրը, որի առանձին մասեր ներառվել են ֆինանսական կրթության կազմակերպմանն ուղղված և ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից երաշխավորված հատուկ ձեռնարկի մեջ: Այս գլխում դիտարկվում է նաև գեղեցիկի ձևավորման խնդիրը հավանականությունների տեսության և լոգարիթմական ֆունկցիաների ուսուցման գործընթացում:

Այս գլխի վերջում ներկայացվում են մանկավարժական գիտափորձի արդյունքները, որոնց ընթացքում օգտվել է մանկավարժական և վիճակագրական տարբեր մեթոդներից:

Արժեքավոր են ատենախոսի կողմից կազմված բազմաթիվ խնդիրները, թեմատիկ պլանները, գործնական և հետազոտական աշխատանքների նմուշօրինակները, մոդուլները, որոնք ուղղված են սովորողների գեղագիտական դաստիարակության իրականացմանը:

Հետազոտությունն ունի ակնհայտ գիտական արժեք և արդիականություն, սակայն կարելի էր կատարել մի շարք դիտարկումներ:

Արդիականության բաժնում նշվում է, որ մաթեմատիկական կարող է ծառայել որպես գեղագիտական արժեքների ձևավորման գործիք: Այս պնդմանը կարելի էր ավելի ընդգրկուն հիմնավորում տալ՝ հավելելով վիճակագրական կամ հետազոտական տվյալներով, մասնավորաբար՝ ավելացնել կոնկրետ հետազոտական արդյունքներ կամ միջազգային փորձից օրինակներ, որոնք ապացուցում են, որ մաթեմատիկայի ուսուցման մեջ գեղագիտական բաղադրիչի ընդգրկումը նպաստում է ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմանը:

Թեև ներկայացված նպատակն ու խնդիրները տրամաբանական և փոխկապակցված են, դրանց կառուցվածքը կարելի էր ավելի հստակեցնել, հատկապես տարբերակելով տեսական և կիրառական նպատակները:

Նպատակները կարելի էր բաժանել երկու խմբի՝ տեսական (օրինակ՝ մաթեմատիկայի գեղագիտական ներուժի բացահայտում) և կիրառական (օրինակ՝ ուսուցման մեթոդների մշակումը):

Խնդիրները կարելի էր վերադասավորել ըստ դրանցից բխող ուղղությունների, օրինակ՝ նախ տեսական հետազոտությունները, ապա՝ մեթոդաբանությունը, և վերջում՝ կիրառելիությունը:

Հետազոտությունում նշված են տարբեր գիտնականներ, ովքեր անդրադարձել են մաթեմատիկական գեղեցիկի խնդրին, բայց պետք էր ավելի ընդգծել, թե ինչպես է այս տեսությունը կիրառվում հենց ավագ դպրոցում, համալրելով խորքային վերլուծությամբ, թե մաթեմատիկայի գեղագիտական բաղադրիչն ինչպես է դրսևորվում ուսուցման տարբեր մաստիճաններում՝ ուսուցման շարունակականության ապահովման համատեքստում:

Կարծում ենք աշխատանքը կշահեր, եթե նրանում ֆինանսական կրթությանը վերաբերող ենթաթեմայում առավել հանգամանորեն լուսաբանվեր հայցորդի կողմից իրականացված վերապատրաստման ծրագրի բովանդակությունը:

Նկատենք, որ աշակերտների կողմից Պյութագորասի թեորեմի երեք ձևակերպումների գեղագիտական գրավչության չափանիշը համարվել է այն, որ երկրորդում սիմվոլներն ավելի քիչ են, քան առաջինում, և այն առավել պարզ տեսք ունի, քան առաջինը: Իսկ երրորդում չկան սիմվոլներ, այն իր պարզությամբ կատարյալ է: Ակնհայտ է անհամադրելիություն հետազոտական այս դիտարկման և ընտրված թեմաների մաթեմատիկական բովանդակության ներկայացման միջև, այն

հաշվառմամբ, որ, օրինակ, լոգարիթմների հետ առնչվող նյութը գրեթե ամբողջությամբ սիմվոլիզացված բնույթ ունի:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նարե Արթուրի Ղազարյանի «Ավագ դպրոցում գեղագիտական արժեքների ձևավորումը որպես մաթեմատիկայի ուսուցման հիմնախնդիր» ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանավորման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, ԲԿԳԿ-ի կողմից ԺԳ.00.02 «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (մաթեմատիկա) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացվող պահանջներին, իսկ ատենախոսն արժանի է հայցած գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝

Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

Քնարիկ Հովհաննիսյան

Քնարիկ Հովհաննիսյանի մտքագրությունը հաստատում եմ՝

Խ. Աբովյանի անվան ՀՊԱՀ-ի գիտական քարտուղար,
մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ



Մ.Մ.Իսախրյան